ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.11.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/113

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե
Բողոք բերող՝ «Մեծն Էրիկ» ՍՊԸ
Երրորդ անձ՝ «Զեթ-Պրոֆիլ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթ, Նոր Գեղիի «Ակադեմիկոս Գ.Աղաջանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի վերակառուցման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Մեծն Էրիկ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 26.10.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է արձանագրության 1.1 կետով «Մեծն Էրիկ» ՍՊԸ-ի մասով գրառումը՝ գումարների հանրագումարը ընդհանուր գնի գումարին չհամապատասխանելու մասով համարել պատշաճ, հիմնավոր և հեռացնել այն արձանագրությունից, իսկ նույն արձանագրության 1.3 կետի՝ հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով հայտը մերժելու մասին որոշումը՝ չեղարկել:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 19.10.2020թ.-ին:

Բողոքներ քննող անձի 20.10.2020թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/15882-2020 գրությամբ բողոքը վերադարձվել է դրանում առկա թերությունները վերացնելու համար:

Ընկերությունը 21.10.2020թ.-ին ներկայացրել է բողոքի շտկված տարբերակը:

Բողոքներ քննող անձի 22.10.2020թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/15986-2020 գրությամբ բողոքը վերադարձվել է կրկին՝ բողոքում առկա թերությունները վերացնելու համար:

Ընկերությունը 22.10.2020թ.-ին կրկին ներկայացրել է բողոքի շտկված տարբերակը:

Բողոքներ քննող անձի 23.10.2020թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/16068-2020 գրությամբ բողոքը երրորդ անգամ վերադարձվել է բողոքում առկա թերությունները վերացնելու համար:

Ընկերությունը 26.10.2020թ.-ին ներկայացրել է բողոքի շտկված՝ վերջնական տարբերակը:

26.10.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/113 համարի ծածկագիրը:

02.11.2020թ.–ին՝ ներկայացված միջնորդության հիման վրա «Զեթ-Պրոֆիլ» ՍՊԸ-ն ներգրավվել է գործով որպես երրորդ անձ:

Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 13.11.2020թ.-ին:

2. <u>«Մեծն Էրիկ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.

«Մեծն Էրիկ» ՍՊԸ-ն 26.10.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Սույնով «Մեծն Էրիկ» ՍՊԸ-ը հայտնում է, որ

Պատվիրատուն՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, 4-րդ հարկ հասցեումգ նահատող

հանձնաժողովի 2020թ. Սեպտեմբերի 8-ի թիվ 1 որոշմամբ հայտարարվել է հրատապ բաց մրցույթ ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/1 ծածկագրով (մրցութային փաթեթի Հրավերի 1-ին էջում ծածկագիրը սխալմամբ նշված է ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/11) Կոտայքի մարզի Նոր Գեղիի «Ակադեմիկոս Գ. Աղաջանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի վերակառուցման:

«Մեծն էրիկ» ՍՊԸ-ը մասնակցել է նշված մրցույթին և հաստատված կարգով և ժամկետում ներկայացրել է իր համապատասխան մրցութային հայտը:

Գնահատող հանձնաժողովը 2020թ. հոկտեմբերի 8-ի Արձանագրություն 2-2-ով, կետ 1.1-ով «Մեծն էրիկ» ՍՊԸ-ի մասով արձանագրել է հետևյալը (մեջբերում).

- Մասնակցի գնային առաջարկում արժեք և ԱԱՀ սյունյակների և տառերով, և թվերով գրված գումարների հանրագումարը չի համապատասխանում ընդհանուր գինը սյունյակի տառերով գրված գումարին,

և այս հիմնավորմամբ, նույն արձանագրության կետ 1-3-ով կայացրել է հետևյալ որոշումը (մեջբերում).

- «Մեծն էրիկ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

Սույնով «Մեծն էրիկ» ՍՊԸ-ը հայտնում է իր միանշանակորեն անհամաձայնությունը գնահատող հանձնաժողովի վերը նշված արձանագրության հիմնավորումների և որոշման հետ, և ներկայացնում է իր բողոքը.

Արձանագրություն 2-2-ի կետ 1-1-ի գումարների հանրագումարը ընդհանուր գնի գումարին չհամապատասխանելու մասով, ինչպես նաև կետ 1-3-ի հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով հայտը մերժելու որոշման մասով.

Մեր մրցութային հայտում այդ թվերն են. 1 066 809 786 + 213 361 957 = 1 280 171 744, որտեղ երևում է, որ առկա է 1 (մեկ) դրամի տարբերություն: Իրականում այդ թվերը հետևյալ կլորացված թվերն են. 1 066 809 786,4 + 213 361 957,3 = 1 280 171 743,7, ինչում գնահատող հանձնաժողովը դյուրին կերպով կարող էր ստուգել հայտի հետ միաժամանակ ներկայացված ծավալաթերթ-նախահաշվի excel տարբերակի ստուգմամբ: Իսկ թվերի նշված կլորացումը մեր կողմից կատարվելն Մրցութային հրավերի ՄԱՍ I 5. ՀԱՅՏԻ ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԸ. կետ 5.2-ի պահանջի համաձայն, որտեղ բառացի ասվում է (2-րդ պարբերությունից). «Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումը իրականցվում են առանց սույն կետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

դ. գնային առաջարկի արժեք, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյուներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ տասնորդականը դեպի ներքն ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին դեպի վերև ամբողջ թիվը»

Միաժամանակ, Մրցութային հրավերի ՄԱՍ I; 8. ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՈՒՄԸ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ և ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ; կետ 8.4-ի պահանջի համաձայն, որտեղ բառացի ասվում է հետևյալը.

«Ընտրված մասնակիցը որոշվում է՝

Բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով: Ընդ որում, հանձնաժողովի կողմից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելիս գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց սույն հրավերի 1-ին մասի 5.2-րդ կետում նշված հարկի գումարի հաշվարկման, իսկ հայտերը գնահատելիս հիմք է ընդունում համակարգում կցված մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:»:

Վերոգրյալի հիման վրա, Ընկերությունը Բողոքներ քննող անձից խնդրել է արձանագրության 1.1 կետով «Մեծն Էրիկ» ՍՊԸ-ի մասով գրառումը՝ գումարների հանրագումարը ընդհանուր գնի գումարին չհամապատասխանելու մասով համարել պատշաճ, հիմնավոր և հեռացնել այն արձանագրությունից, իսկ նույն արձանագրության 1.3 կետի՝ հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով հայտը մերժելու մասին որոշումը՝ չեղարկել:

«Մեծն Էրիկ» ՍՊԸ-ն 04.11.2020թ.-ին ներկայացված գրությամբ հավելել և հայտնել է հետևյալը.

«Ուսումնասիրելով ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/1 ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ մեր բողոքի առընչությամբ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի հարգարժան գլխավոր քարտուղարի ստորագրությամբ պատասխան գրությունը, հայտնում ենք մեր դիրքորոշումը, որպես անհամաձայնություն գրության մեջ բերված մերժման հիմնավորումներին: Դրանք հետևյալն են.

Հայտը մերժվել է ՀՀ կառավարության ա0 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի հիման վրա պահպանելով Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները:

Մեջբերում Կարգից ըստ նշված կետերի

40. խայտերի բացման նիստում՝

4) հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը.

32. հրավերով նախատեսվում է նաև, որ

2) մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման.

Ուստի գնային առաջարկը ստորադաս դարձնելու և գումարելիների գործողությունը հիմնարար դարձնելու ձգտումը նույնպես անհիմն է, առավել ես Պատվիրատուի կողմից Ձեզ ներկայացված «Մեծն Էրիկ» ՍՊԸ-ի Հայտի փաթեթի ֆինանսական մասում առկա Նախահաշվի Excel տարբերակում գումարների տասնորդականների ստուգմամբ կհաստատվի նաև մեր Հայտի համապատասխանությունը Մրցութային հրավերի պահանջներին (Մրցութային Հրավերի ՄԱՍ I 5. ՀԱՅՏԻ ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԸ; կետ 5.2):

Մեր դիրքորոշումը, ելնելով վերոգրյալից այն է, որ Պատվիրատուի կողմից գրությամբ ներկայացրած հիմքերը այն հիմքերն են, որոնք «Մեծն Էրիկ» ՍՊԸ-ի Հայտը ոչ թե մերժելու, այլ ընդունելի համարելու հիմքեր են:»:

3. <u>ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 27.10.2020թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/16179-2020 գրությամբ դիմել է ՀՀ քաղաքաշինության կոմիտեին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Մեծն Էրիկ» ՍՊԸ-ի կողմից 26.10.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 28.10.2020թ.-ին ներկայացված թիվ 02/16.4/8403-2020 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ուսումնասիրելով ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/1 ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ «Մեծն Էրիկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ ընկերություն) կողմից ներկայացված բողոքը՝ տեղեկացնում եմ, որ ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2020 թվականի հոկտեմբերի 8-ի N 2-2 արձանագրությամբ մերժել է ընկերության հայտը ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի հիման վրա՝ պահպանելով Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեն գտնում է, որ ընկերության հայտը գնահատվել է սահմանված կարգով և վերջինիս կողմից ներկայացված բողոքն անհիմն է ու ենթակա է մերժման:

Օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ կից ներկայացնում եմ անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները և հաստատված գնումների պլանը տեղեկագրում (procurement.am) հրապարակված լինելը հավաստող կայքից արտատպված փաստաթղթերի պատճենները:»:

4. <u>Երրորդ անձ՝ «Զեթ-Պրոֆիլ» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Ներկայացված բողոքի քննության ընթացքում, Բողոքներ քննող անձի որոշմամբ թիվ «ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ընտրված/հաղթող մասնակից ճանաչված «Զեթ-Պրոֆիլ» ՍՊԸ-ն ներգրավվել է գործով որպես երրորդ անձ (այսուհետ նաև՝ Երրորդ անձ):

«Զեթ-Պրոֆիլ» ՍՊԸ-ն 06.11.2020թ.-ին ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է քննվում «Մեծն էրիկ» ՍՊԸ-ի կողմից 26.10.2020թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/113 ծածկագրով բողոքը, որի վերաբերյալ ներկայացնում ենք հետևյալ նկատառու մները.

«Մեծն էրիկ» ՍՊԸ-ի կողմից 26.10.2020թ. (մեր կարծիքով, բողոքարկման համար սահմանված անգործության ժամկետը լրանալուց հետո) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/113 բողոքը, որով «Մեծն էրիկ» ՍՊԸ-ն

վիճարկել է իր հայտը մերժելու իրավաչափության հարցը այն հիմքով, որ հաշվարկի մեջ մեկ դրամի տարբերությունը, սխալը, հայտը մերժելու հիմք չի: Ընդ որում, որ առկա է հաշվարկի թվաբանական սխալ, ընդունում է հենց բողոք բերողը ներկայացված բողոքով:

Նշված բողոքով քննության որևէ նիստ չի նշանակվել:

Տեսնելով, որ «Մեծն էրիկ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև Բողոքաբեր) կողմից 26.10.2020թ. ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/113 բողոքով որևէ նիստ չի նշանակվում, «Զեթ-Պրոֆիլ» ՍՊԸ-ն 02.11.2020թ. ներկայացրել է միջնորդություն, որով մասնավորապես խնդրել է «Զեթ-Պրոֆիլ» ՍՊԸ-ին ներգրավել որպես երրորդ անձ «Մեծն էրիկ» ՍՊԸ-ի կողմից 26.10.2020թ. ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/113 ծածկագրով բողոքի շրջանակներում, ինչպես նաև ընձեռնել հնարավորություն ծանոթանալու բողոքին կից ներկայացված նյութերին, և տրամադրել բոլոր այն փաստաթղթերը, որոնք կներկայացնեն սույն բողոքի կողմերը, որպեսզի «Զեթ-Պրոֆիլ» ՍՊԸ-ն հնարավորություն ունենա պաշտպանելու իր օրինական շահերը և ներկայացնելու դիրքորոշում «Մեծն էրիկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ:

Տեղեկացնում ենք, որ մինչև սույն դիրքորոշումը Ձեզ ներկայացնելը «Զեթ-Պրոֆիլ» ՍՊԸ-ն չի ներգրավվել որպես երրորդ անձ «Մեծն էրիկ» ՍՊԸ-ի կողմից 26.10.2020թ. ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/113 ծածկագրով բողոքի քննությանը, ինչպես նաև ՍՊԸ-ին չեն արամարդրվել բոլոր այն փաստաթղթերը, որոնք ներկայացվել են բողոքով և դրա շրջանակներում, որպեսզի «Զեթ-Պրոֆիլ» ՍՊԸ-ն հնարավորություն ունենար պաշտպանելու իր օրինական շահերը և ներկայացնելու դիրքորոշում «Մեծն էրիկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ:

Այնուամենայնիվ, նման պայմաններում «Զեթ-Պրոֆիլ» ՍՊԸ-ն ստորև ներկայացնում է «Մեծն էրիկ» ՍՊԸ-ի կողմից 26.10.2020թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/113 ծածկագրով բողոքի վերաբերյալ նկատառումներ:

Այսպիսով, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար Նոր Գեղիի ակադեմիկոս Գ. Աղաջանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ ՊՈԱԿ-ի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/1 ծածկագրով հրատապ բաց մրցույթ (այսուհետ նաև Ընթացակարգ):

Վերը նշված ընթացակարգին, ի թիվս այլ ընկերությունների, մասնակցության հայտ են ներկայացրել նաև «Զեթ-Պրոֆիլ» ՍՊԸ-ն և «Մեծն էրիկ» ՍՊԸ-ն:

Մասնավորապես, «Մեծն էրիկ» ՍՊԸ-ն ներկայացրել է հետևյալ գնային առաջարկը (կցվում է).

Չափա-բաժիեերի համարները	Աշխատանքի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /աստերով ն թվերով/	ԱԱԾ" /սատերով և թվեյտվ/	Ընդհանուր գինը /աստերով և թվերով/
1	2	3	4	5=3+4
1	Նոր Գեղիի ակադեմիկոս Գ.Աղաշանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջն ՊՈԱԿ-ի վերակառուցման աշխատանքներ	Սեկ միլիարդ վաթսունվեց միլիոն ութ հարյուր ինը հազար յոթ հարյուր ութսունվեց (1 066 809 786)	Երկու հարյուր տասներեք միլիոն երեք հարյուր վաթսունմեկ հազար ինը հարյուր հիսունյոթ (213 361 957)	Մեկ միլիարդ երկու հարյուր ութսուն միլիոն մեկ հարյուր յոթանասունմեկ հազար յոթ հարյուր քառասունչորս (1 280 171 744)

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 08.10.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 2-2 արձանագրության 1.1 կետի համաձայն արձանագրել է, որ «Մեծն էրիկ» ՍՊԸ-ի գնային առաջարկում արժեք և ԱԱՀ սյունակների և տառերով, և թվերով ցրված գումարների հանրագումարը չի համապատասխանում ընդհանուր գինը սյունակի ասաերով գրված գումարին:

Եվ նույն արձանագրության 1.3 կետի համաձայն որոշում է կայացվել «Մեծն էրիկ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

Իսկ արդեն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 14.10.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 2-5 արձանագրության 2.2 կետի համաձայն «Զեթ-Պրոֆիլ» ՍՊԸ-ն ճանաչվել է որպես ընթացակարգի ընտրված մասնակից և նույն արձանագրության 3.1 կետի համաձայն որոշվել է անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «Զեթ-Պրոֆիլ» ՍՊԸ-ին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն մասնակիցը չի կարող նույն Մրցույթին ներկայացնել մեկից ավելի հայտ:

Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Ձայտը ևերառում է մասնակցի հաստատած

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (10.10.2019թ.-ի թիվ 1422-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և տառերով, և թվերով կամ միայն տառերով,

բ. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին,

գ. գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված,

դ. գնային առաջարկի արժեք, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ տասնորդականը դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին դեպի վերև ամբողջ թիվը,

ե. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ: Ընդ որում, սույն պարբերության մեջ նշված դեպքում գնահատող հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը, զ. գնային առաջարկի սյունակներում տառերով լրացված գումարների մեջ լումաները նշված են թվերով:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված Հայաստանի հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից Ականավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/1 ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերի հավելված 2-ի համաձայն սահմանվել է գնային առաջարկի հաշվարկման կարգը, մասնավորապես.

	Աշխատանքի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱԾ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5=3+4

Վերոհիշյալից ուղղահորեն հետևում է, որ ընդհանուր գինը պետք է հավասար լինի արժեքի և ԱԱՀ, հանրագումարին, այլ կերպ ասած 5=3+4:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, փաստում ենք, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի հաստատած հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենսդիրն իմպերաաիվ կերպով սահմանել է, որ այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը կամ եթե գնային սաաջարկը երկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովի կողմից ներկայացված հայտերը մերժվում են, քանի որ առկա չէ օրենքով սահմանված կարգով գնային առաջարկի շտկման հնարավորություն:

Մինչդեռ «Մեծն էրիկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի հաշվարկը չի համապատասխանում վերոհշյալ իրավական նորմերի և Ընթացակարգի հրավերի պահանջներին, քանի որ ընդհանուր գինը պետք է հավասար լինի արժեքի և ԱԱՀ հանրագումարին, այլ կերպ ասած 5=3+4, իսկ «Ինքնարժեք» և «ԱԱՀ,» սյունակներում նշված գումարների հանրագումարի հավասար չէ «Ընդհանուր գինը» սյունակում տառերով լրացված արժեքի գումարին, պետք է լիներ 1 280 171 743 ՀՀ դրամ, սակայն ներկայացվել է 1 280 171 744 ՀՀ դրամ (առկա է հաշվարկի թվաբանական սխալ մեկ դրամի տարբերությամբ):

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում հանգում ենք այն եզրակացության, որ գնային առաջարկում անհամապատասխանություն արձանագրվելու դեպքում կիրառելի չէ Կարգի 41-րդ կետով նախատեսված շտկելու հնարավորությունը, ուստի տվյալ դեպքում «Ինքնարժեք» և «ԱԱՀ» սյունակներում նշված գումարների հանրագումարի հաշվարկի սխալը պետք է գնահատել որպես գնային առաջարկին վերագրվող անհամապատասխանություն ոչ ենթակա շտկման, որպիսի պայմաններում գնահատող հանձնաժողովի կողմից «Մեծն էրիկ» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու մասին որոշումն իրավաչափ է, ինչի արդյունքում հանձնաժողովի կողմից պահպանվել են Օրենքի 34-րդ հոդվածի և Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի և 40-րդ կետի պահանջները:

Բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն կարևոր հանգամանքի վրա, որ Ձեր վարույթում արդեն իսկ քննվել է նույնաբովանդակ բողոք, որը ներկայացվել էր հենց «Ձեթ-Պրոֆիլ» ՍՊԸ-ի կողմից գնային առաջարկում մեկ դրամի սխալ հաշվարկ կատարելու հիմքով, որի արդյունքում «Ձեթ-Պրոֆիլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/98 ծածկագրով բողոքը մերժվել էր ամբողջությամբ անհիմն լինելու պատառաբանությամբ:

Վերոհիշյալ բողոքով կայացված որոշմամբ արձանագրվել է, որ գնային առաջարկում անհամապատասխանություն արձանագրվելու դեպքում կիրառելի չէ Կարգի 41-րդ կետով նախատեսված շտկելու հնարավորությունը, ուստի տվյալ դեպքում հաշվարկի սխալը պետք է գնահատել որպես գնային առաջարկին վերագրվող անհամապատասխանություն ոչ ենթակա շտկման, որպիսի պայմաններում գնահատող հանձնաժողովի կողմից «Ձեթ Պրոֆիլ» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու մասին որոշումն իրավաչափ է, ինչի արդյունքում հանձնաժողովի կողմից պահպանվել է Օրենքի 34-րդ հոդվածի և Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի և 40-րդ կետի պահանջները:

Խնդրում ենք նաև նկատի ունենալ, որ բողոքներ քննող անձ Գ.Ներսիսյանի վարույթում քննված նույնաբովանդակ մեկ այլ բողոքով, որը ներկայացվել էր «Դան Շին» ՍՊԸ-ի կողմից, համապատասան միջնորդության հիման վրա բողոքի քննությանը ներգրավվել էր ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը, որի ներկայացուցիչը ներկայացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/47 ծածկագրով բողոքի շրջանակներում նշանակված նիստին պնդել է, որ գնահատող հանձնաժողովը գործել է իրավաչափ մերժելով «Դան Շին» ՍՊԸ-ի հայտը գնային առաջարկում սխալ հաշվարկ (մեկ դրամի) կատարելու հիմքով /հղումը այստեղ https://www.youtube.com/watch?v=sAbZOqOoS-I /:

Անհիմն է նաև «Մեծն էրիկ» ՍՊԸ-ի այն պնդումը, որ նշված թվաբանական սխալը հանդիսանում է կլորացման արդյունք, ինչը թույլատրելի է Ընթացակարգի հրավերի 5.2 կետի համաձայն:

Մասնավորապես, բողոքով «Մեծն էրիկ» ՍՊԸ-ն նշել է, որ հայտով ներկայացրած 1 066 809 786+213 361 957=1 280 171 744 դրանք իրականում կլորացված հետևյալ թվերն են 1 066 809 786,4+213 361 957,3=1 280 171 743,7:

Մինչդեռ տվյալ պնդումը իրավաչափ չէ և նպատակ ունի արդարացնել թույլատրված հաշվարկի թվաբանական սխալը ոչ իրավաչափորեն այն փորձելով տեղավորել Ընթացակարգի հրավերի 5.2 կետով սահմանված թույլատրելի կլորացման տրամաբանության մեջ:

Բողոքներ քննող անձին Բողոքաբերի կողմից առաջարկվում է գնային առաջարկի իրական թվերը ստուգել ներկայացված ծավալաթերթ-նախահաշվում նշված թվերի հետ, որ պարզ լինի, թե իրականաում ինչ թվերի մասին է խոսքը:

Բայց այստեղ պետք է փաստել մի շատ կարևոր հանգամանք, անկախ նրանից, թե ինչ թվերից է ձևավորվել արժեքը և համապատասխանաբար ԱԱՀ, ներկայացված գնային առաջարկում որպես արժեքի գին նշված է 1 066 809 786, այլ ոչ թե 1 066 809 786,4, համապատասխանաբար որպես ՍՍՀ նշված է 213 361 957, այլ ոչ թե 213 361 957,3, և

համապատասխանաբար նշված թվերի հանրագումարը կազմում է 1 280 171 744, այլ ոչ թե 1 280 171 743,7, ինչը առաջ է բերում հաշվարկի թվաբանական սխալ:

Ելնելով վերոգրյալից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք «Մեծն էրիկ» ՍՊԸ-ի կողմից 26.10.2020թ. ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/113 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ:»:

5. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2020/113 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից Նոր Գեղիի «Ակադեմիկոս Գ. Աղաջանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 08.09.2020թ.-ին հայտարարվել է «ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ):

ii. Մրցույթին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Մեծն Էրիկ» ՍՊԸ-ն:

iii. «Մեծն Էրիկ» ՍՊԸ-ն ներկայացրած գնային առաջարկով ներկայացրել է հետևյալ գները.

Չափա-բաժինների համարները	**Աշխատանքի անվանումը**	**Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/**	**ԱԱՀ /տառերով և թվերով/**	**Ընդհանուր գինը /տառերով և թվերով/**
1	***2***	***3***	***5***	***6=3+4+5***
1	Նոր Գեղիի «Ակադեմիկոս Գ. Աղաջանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի վերակառուցման աշխատանքների	1 066 809 786	213 361 957	1 280 171 744

iv. Մրցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 08.10.2020թ.-ի նիստի թիվ 2.2 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը արձանագրել է, որ Ընկերության գնային առաջարկում արժեք և ԱԱՀ սյունյակների տառերով և թվերով գրված գումարների հանրագումարը չի համապատասխանում ընդհանուր գինը սյունյակի տառերով գրված գումարին:

v. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է «Մեծն Էրիկ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

6. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Մեծն Էրիկ» ՍՊԸ-ի կողմից 26.10.2020թ.-ին ներկայացված բողոքը անհիմն է և ենթակա է մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը չի կարող նույն Մրցույթին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի

հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և՛ տառերով, և՛ թվերով կամ միայն տառերով,

բ. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին,

գ. գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված,

դ. գնային առաջարկի արժեք, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը,

ե. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ: Ընդ որում, սույն պարբերության մեջ նշված դեպքում գնահատող հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը,

զ. գնային առաջարկի սյունակներում տառերով լրացված գումարների մեջ լումաները նշված են թվերով:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային

համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից Նոր Գեղիի «Ակադեմիկոս Գ. Աղաջանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 08.09.2020թ.-ին հայտարարված «ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/1» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով

սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից Նոր Գեղիի «Ակադեմիկոս Գ. Աղաջանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 08.09.2020թ.-ին հայտարարված «ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Մեծն Էրիկ» ՍՊԸ-ն գնային առաջարկով ներկայացրել է հետևյալ գները.

Չափա-բաժինների համարները	Աշխատանքի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*5*	*6=3+4+5*
1	Նոր Գեղիի «Ակադեմիկոս Գ. Աղաջանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի վերակառուցման աշխատանքների	1 066 809 786	213 361 957	1 280 171 744

Մրցույթի գնահատող հանձնաժողովի 08.10.2020թ.-ի նիստի թիվ 2.2 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովն արձանագրել է, որ Ընկերության գնային առաջարկում արժեք և ԱԱՀ սյունյակների տառերով և թվերով գրված գումարների հանրագումարը չի համապատասխանում ընդհանուր գինը սյունյակի տառերով գրված գումարին, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է «Մեծն Էրիկ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Մեծն Էրիկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի հաշվարկը չի համապատասխանում վերոնշյալ իրավական նորմերի պահանջներին, քանի որ սխալ է ներկայացվել պայմանագրի կատարման համար մասնակցի կողմից առաջարկվող ընդհանուր գինը: Մասնավորապես՝ Մասնակցի կողմից «Արժեք» սյունյակում նշվել է 1 066 809 786 ՀՀ դրամ, իսկ «ԱԱՀ» սյունյակում նշվել է 213 361 957 ՀՀ դրամ, որոնց հանրագումարը ստացվում է 1 280 171 743 ՀՀ դրամ՝ «Մեծն Էրիկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի «Ընդհանուր գինը» սյունյակում նշած 1 280 171 744 ՀՀ դրամ գումարի փոխարեն /1 066 809 786 (արժեք) + 213 361 957 (ԱԱՀ) = 1 280 171 743/:

Վերոնշյալով պայմանավորված, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընկերության ներկայացրած ընդհանուր գինը պետք է կազմեր 1 280 171 743 ՀՀ դրամ, այն դեպքում, երբ «Մեծն Էրիկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի «Ընդհանուր գինը» սյունյակում նշվել է 1 280 171 744 ՀՀ դրամ. ինչի արդյունքում «Արժեք» և «ԱԱՀ» սյունակների տառերով և թվերով գրված արժեքների հանրագումարը չի համապատասխանում «Ընդհանուր գինը» սյունակում տառերով լրացված արժեքի գումարին: «Արժեք» և «ԱԱՀ» սյունակներում նշված գումարների հանրագումարի և «Ընդհանուր գինը» սյունակում տառերով լրացված արժեքի գումարի միջև առկա է 1 (մեկ) ՀՀ դրամ գումարի չափով տարբերություն:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ գնային առաջարկում անհամապատասխանություն արձանագրվելու դեպքում կիրառելի չէ Կարգի 41-րդ կետով նախատեսված շտկելու հնարավորությունը, ուստի տվյալ դեպքում «Արժեք» և «ԱԱՀ» սյունակների ու «Ընդհանուր գինը» սյունակում առկա գումարների չափի սխալ հաշվարկելու հանգամանքը պետք է գնահատել որպես գնային առաջարկին վերագրվող անհամապատասխանություն՝ ոչ ենթակա շտկման, որպիսի պայմաններում գնահատող հանձնաժողովի կողմից «Մեծն Էրիկ» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու մասին որոշումն իրավաչափ է, ինչի արդյունքում Հանձնաժողովի կողմից պահպանվել է Օրենքի 34-րդ հոդվածի և Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի և 40-րդ կետի 4-րդ ենթակետի դրույթները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Մեծն Էրիկ» ՍՊԸ-ի կողմից 26.10.2020թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2020/113 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**